

### **Հարց**

**Դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված մնացորդը ենթակա՞ է արդյոք նվազեցման համախառն եկամտից:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված մնացորդը շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

### **Հարց**

**Որոշակի տարեկան տոկոսադրույքով տրամադրված փոխառության գծով եկամտի (տոկոսի) ստացման իրավունքը Ե՞րբ է համարվում ձեռք բերված:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 42-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ որոշակի տարեկան տոկոսադրույքով տրամադրված փոխառության գծով եկամտի (տոկոսի) ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված փոխառության ժամկետը լրանալու պահից, իսկ եթե փոխառության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան:

### **Հարց**

**Հաշվետու տարում եկամուտը չստանալու դեպքում նվազեցվու՞մ են արդյոք վարչական և ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հարկատուի գործունեության հետ կապված վարչական և ֆինանսական ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում:

### **Հարց**

**Հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքը ինչպե՞ս է որոշվում:**

## **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների (նյութեր, դետալներ, պահեստամասեր, բլոկներ և համանման մասեր) կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է տվյալ հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի ձևավորման ժամանակ այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի մեջ նշված ակտիվների արժեքների տեսակարար կշիռներից ելնելով, որոնք կիրառվում են տվյալ հիմնական միջոցի՝ հարկային հաշվառման նպատակով որոշված մնացորդային արժեքի նկատմամբ:

## **Հարց**

*Մեկ օրացուցային փարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտրանսպորտի՝ որևէ ձևով կափարվող հատուցման դիմաց օտարումը ո՞ր դեպքում է համարվում ապրանքի մատակարարում:*

## **Պատասխան**

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների՝ նշված գործարքը կոիտվի ապրանքի մատակարարում, եթե երկրորդ և ավելի թվով անգամ օտարվող գույքը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Ընդ որում՝ տվյալ դեպքում ԱԱՀ-ի շեմ չի կիրառվում:

## **Հարց**

*Ի՞նչ ժամկետում և կարգով է վճարվում սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարը:*

## **Պատասխան**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ պակաս վճարված նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: